ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ա-22

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 01 2019թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայն, ի դեմս ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը -ը, ի դեմս
(կազմակերպության անվանումը)
տնօրեն Սերգո Հայրապետյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է
(անուն ազգանուն)
Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շիրակի հնագիտական եվ պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 30.980.500 (երեսուն միլիոն ինը հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ - ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 30980500 (երեսուն միլիոն ինը հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

(թվերով և բառերով)

4 Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն
ք. Երևան, Մարշալ Բաղրամյանի 24	ք. Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/հ 9000110241115	Հ/հ 900018005547
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)*	Տնօրենի ԺՊ՝ _____ *(ստորագրություն)*
Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 1
«30» 01 2019թ.
N 4-92 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Սերգո Հայրապետյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «30» 01 20.19 թ. N 4-92 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 30.980.500(երեսուն միլիոն ինը հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրենի ԺՊ՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(անուն, ազգանուն)	(անուն, ազգանուն)

Հավելված 2
«30» 01 20.. թ.
N 15-22 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:
2. **Աշխատանքի նպատակը.** 2019թ. նպատակ է դրվում շարունակել Շիրակի ազգաբանության, հնագիտության, պատմության և արդի բանահյուսության մի շարք հիմնահարցերի ուսումնասիրությունը, մասնավորապես՝

ա/ Ավարտին հասցնել Մեծ Սեպասար վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի, ընդլայնել Ազատանի մ.թ.ա. 1-ին հազարամյակի համալիր հուշարձանի, Ջրաձորի վաղերկաթիդարյան դամբարանադաշտերի պեղումները, իրականացնել չափագրումներ, գտածո նյութերի համեմատական ուսումնասիրություն և վերականգնողական աշխատանք:

բ/ Ավարտին հասցնել մ.թ.ա. 1-ին հազարամյակում Ախուրյանի ավազանի երկրների տեղադրության, բնակչության էթնիկ պատկանելությանը, հավատալիքներին ու սովորույթներին վերաբերող մի շարք վիճահարույց հարցերի քննությունը, շարունակել Շիրակին հարակից Տայքի պատմաժողովրդական և վարչատնտեսական իրավիճակի, ավարտել Ալեքսանդրապոլի գավառի 20-րդ դարի առաջին տասնամյակների պատմաժողովրդագրական իրադրության, հասարակական-մշակութային կյանքի, տարածաշրջանում խորհրդային իշխանության հաստատման շրջանի քաղաքական պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

գ/ Շարունակել ՀՀ Շիրակի մարզի համայնքների պատմազգագրական և էթնոհոգեբանական ներկա իրավիճակի ուսումնասիրության, Շիրակի ժողովրդական երաժշտության և բանահյուսության արդի նմուշների հավաքման, համակարգման և վերծանման աշխատանքները, ժողովրդական տոնակատարությունների ու ծեսերի արդի փոխակերպումների ուսումնասիրությունը:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները.** «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» ծրագիրը իրականացվելու է բարձր պատասխանատվությամբ, գիտական պատշաճ մակարդակով: Ուսումնասիրվող նյութի անաչառ ու հանգամանալի վերլուծությամբ սպառիչ ու ամբողջական պատասխաններ կտրվեն պատմական գավառի հոգևոր և նյութական հարուստ ժառանգության, մշակութային ու հասարակական կյանքի տարբեր կողմերին վերաբերող բազմազան հարցերի: Վերոնշյալ պահանջների կատարումը կապահովի Ծրագրի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների մասնագիտական բարձր որակ, անհրաժեշտ մակարդակ ու արդյունավետ շարունակականություն:

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» գիտահետազոտական ծրագիրն իրականացվում է կենտրոնի 17 գիտական աշխատակիցների ուժերով /2 գիտդոկտոր և 13 գիտթեկնածու/, որոնք որակավորման վերջին գործընթացն անցել են 2016-ի դեկտեմբերին: Մասնագիտական խորը գիտելիքների ու մեթոդական անհրաժեշտ հմտությունների տեր գիտաշխատողներ են, իրենց բնագավառներում արժանիորեն հեղինակություն վայելող մասնագետներ, որոնք միանգամայն ի զորու են արդյունավետությամբ իրականացնելու գիտահետազոտական ծրագրի իրենց բաղադրիչը:

4. **Աշխատանքի բովանդակությունը.** «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-2» գիտահետազոտական ծրագրում ավանդաբար կարևոր տեղ է հատկացվում Շիրա-

կի հնագիտական ուսումնասիրությանը: 2019թ. կսկսվի նախորդ տարվա պեղումներով հայտնաբերված նյութերի կամերալ ուսումնասիրության և վերականգնման աշխատանքներով, որոնց կհաջորդեն պեղումներ երեք հնավայրերում՝ Մեծ Սեպասարում /հունիս-հուլիս/,Ջրաձորում /օգոստոս-սեպտեմբեր/,Ազատանում /հոկտեմբեր-նոյեմբեր: Մեծ Սեպասարում նախատեսվում է պեղումներով ստանալ վաղբրոնզիդարյան տաճարական համալիրի սահմանների հատակագծային ամբողջական պատկերը, նաև շարունակել և ավարտել ենթադրվող դամբարանադաշտի որոնումները: Իսկ Ջրաձորի նոր ուսումնասիրվող բազմաշերտ հնավայրի վաղբրոնզիդարյան շերտի պեղումները կարող են լավ նյութ տալ հնավայրի տարբեր ժամանակաշրջանների նյութական մշակույթի, տնտեսական պատկերի, ամրաշինական և բնակելի կառույցների ճարտարապետական պատկերի, կառուցողական սկզբունքների և հնավայրի գոյատևման ժամանակաշրջանի մասին: Պեղվելու է նաև Ազատանի եռաշերտ երկաթիդարյան բնակավայրի ստորին շերտը: Վերոնշյալ երեք հնագիտական հուշարձանների պեղման, հայտնաբերված նյութերի կամերալ մշակման, վերականգնման և կոնսերվացման համար 2019-ին կպահանջվի մինչև 4 միլիոն ՀՀ դրամ:

Բազային ծրագրի շրջանակներում 2019թ. կշարունակվի հայոց պատմության համատեքստում Շիրակի տարբեր ժամանակահատվածների պատմական իրողությունների ուսումնասիրությունը: Տարածաշրջանի հնագույն պատմությունն ուսումնասիրող խմբի կողմից «Ախուրյանի ավազանը մ.թ.ա. 1-ին հազարամյակում» ծրագրային թեմայի շրջանակներում՝ ա/. նախատեսվում է ավարտել Ախուրյանի ավազանի մ.թ.ա. 1-ին հազարամյակի երկրների տեղադրության, տեղանունների գիտական ստուգաբանության, այդ երկրների բնակչության հնդեվրոպական հիմքի, պաշտամունքի, հավատալիքների ուսումնասիրությունը: բ/. Շարունակվելու է Երվանդունյաց Հայաստանին վերաբերող անտիկ շրջանի հույն պատմիչների հաղորդումների ուսումնասիրությունը՝ համադրելով դրանք հայկական տարբեր աղբյուրներից հայտնի տվյալների հետ, պարզելու համար, թե ի՞նչ էին իրենցից ներկայացնում սրբավայր արգելանոցները, ու՞մ համար էին դրանք որսատեղի ծառայում, դրանք միայն արքայական որսատեղիներ էին, թե՞ ունեին նաև հասարակական նշանակություն, ինչպես տեղորոշել դրանք պատմական Հայաստանի քարտեզի վրա:

2019-ին Կենտրոնում կշարունակվեն պատմական գավառի և հարակից տարածքների պատմաժողովրդագրությանը նվիրված ուսումնասիրությունները: Թեմաներից մեկը՝ «Ճորոխի ավազանի 1830-1918թթ. ժողովրդագրական դրությունը», շարունակելու է պատմական Տայքի տարածքում ձևավորված օսմանյան և ռուսական վարչամիավորներում առկա բնակավայրերի տեղաբաշխման ու տեղագրության, էթնոկրոնական և վարչաժողովրդագրական պատկերի նկարագրությունը: Վերլուծվելու են նաև վրացի գիտնականների՝ 1878-ից սկսված մի շարք ուսումնասիրություններ՝ միտված Տայքի պատմամշակութային ժառանգության յուրացմանը Նախատեսվում է նաև խորությամբ ուսումնասիրել թուրք հետազոտողների՝ խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող աշխատանքները, որոնցում առկա են հայ հետազոտողին ոչ հասանելի օսմանյան արխիվային փաստաթղթեր:

Շիրակի նոր պատմության հիմնախնդիրներին նվիրված «Ալեքսանդրապոլի գավառը 1918-20թթ.» թեմայի գծով նպատակ է դրվում գավառի պատմության վերջին փուլի պատմաժողովրդագրական քննությամբ 2019-ին ամբողջացնել նրա շուրջ ութսունամյա պատմության ուսումնասիրությունը: Նախատեսվում է առանձին քննության առարկա դարձնել թուրքական զորքերի կողմից 1918թ. մայիսին զինագրավված Ալեքսանդրապոլի գավառում իր աշխատանքները ծավալած ՀՀ ԱԳՆ ներկայացուցչության գործունեությունը: Գ. Խոյեցյանի գլխավորած այս կառույցը գործել է 1918թ. սեպտեմբերից մինչև 1919թ. փետրվարը և փաստացի միջնորդ է հանդիսացել տեղի և օսմանյան իշխանությունների միջև: Իր զեկուցագրերում Գ. Խոյեցյանը լավագույնս է բացահայտել Ալեքսանդրապոլի գավառի խաղաղ բնակչության ապրած մեծագույն ողբերգության պատկերը՝ կյանքի, գույքի, արժանապատվության կորուստ, բարոյական կերպարի աղճատում, բռնություն-

ների և կամայականությունների անվերջ շարան: Իր գործունեության վերջին շրջանում ներկայացուցչությունը մեծ աշխատանք տարել թուրքական զորքերի հեռանալուց հետո զավթիչների հետ համագործակցած հայ գյուղապետերին ժողովրդի վրեժից փրկելու և նոր արյունահեղություններից խուսափելու գործում:

«Ալեքսանդրապոլի գավառը XX դ. 20-30-ական թթ.» թեմայի շրջանակներում 2019-ին Կենտրոնում կամբողջացվի նաև Շիրակի տարածաշրջանում խորհրդային իշխանության հաստատման շրջանի /1921-1930թթ./ քաղաքական պատմության ուսումնասիրությունը: Ուշադրության կենտրոնում կլինեն մասնավորապես խորհրդային իշխանությունների կողմից գավառում նոր տնտեսական քաղաքականության /նեպ/ անցման և կոլեկտիվացման կազմակերպման հարցերը: Առանձնակի կարևորվելու են նշյալ ժամանակաշրջանում գավառի քաղաքական և պետական գործիչների գործունեության վերհանումը, անդրադարձ է կատարվելու նաև բռնադատված պետական և քաղաքական գործիչների կյանքին ու գործունեությանը:

2019-ին Կենտրոնում իրականացվող գիտահետազոտական ծրագրի շրջանակներում կավարտվի նաև «Ալեքսանդրապոլի հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին» թեման: Ավարտական տարում նախատեսվում է ընդլայնել Ալեքսանդրապոլի կրթական հաստատությունների պատմության ուսումնասիրության շրջանակները՝ ներառնելով Ալեքսանդրապոլի կրթամշակութային կյանքում տեղի ունեցող նոր վերափոխությունները, որ առնչվում էին քաղաքի դպրոցներում սովորողների թվաքանակի, քաղաքի հասարակական կյանքում նրանց ներգրավվածության, ուսուցիչների քանակի, աշակերտախնամ ընկերությունների գործունեությանը վերաբերող և այլ հարցերի:

Բազային ծրագրի շրջանակներում 2019թ-ին շարունակվելու է «Մեծ եղեռնը վերապրածները» թեման՝ կարևորելով Եղեռնի տարիներին Շիրակում և մասնավորապես Ալեքսանդրապոլի որբանոցներում հանգրվանած արևմտահայ որբուկների ու նրանց ժառանգների մասին տեղեկությունների հավաքումը, որ նպատակ ունի կորստից փրկել ցեղասպանություն վերապրածներին և նրանց սերունդներին վերաբերող ազգագրական նյութերը: Հրատարակության կնախապատրաստվի Մեծ եղեռնը վերապրած Ալխոր Շուշանյանի «Իմ մանկությունը» հուշապատումը:

Կենտրոնում իրականացվող հետազոտական ծրագրի կարևոր բաղադրիչներից է նրա հարուստ ազգագրական ժառանգության գիտամշակութային արժեքավորումը: 2019թ. ավարտական տարի է նաև «Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքի սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթ» թեմայի համար: Մասնավորապես նախատեսվում է ներկայացնել 19-րդ դարի վերջին արդեն ձևավորված ալեքսանդրապոլցու կերպարն իր աշխարհընկալմամբ, աշխարհայեցողությամբ ու արժեհամակարգի առանձնահատկություններով: Քննության կառնվեն Ալեքսանդրապոլի բնակչության հոգեխառնվածքի առանձնահատկությունները, բնութագրական հատկանիշները՝ ներկայացնելու ալեքպոլցու կերպարն իր տարբեր դրսևորումներով, ընտանեկան և հասարակական հարաբերությունների համատեքստում՝ առօրյա և տոնածիսական կյանքում: Այս հետազոտությամբ նպատակ է դրվում ամբողջացնել Գյումրի–Ալեքսանդրապոլ քաղաքի ազգագրական նկարագիրը:

Կենտրոնում 2019-ին կամփոփվի նաև «Շիրակի ժողովրդական ծեսերի ու տոների ժամանակակից փոխակերպումներ, տոնահանդեսի մշակույթ» ազգահոգեբանական թեման: Քննվող հարցեր են լինելու՝ ա/. մարզի համայնքների ազգաբանական մշակույթի և բանահյուսության ավանդույթների պահպանման գործակցի որոշումը, բանահյուսական և ազգաբանական նյութերի արտատեքստային բաղադրիչների նկարագրությունը, բ/. Շիրակում ժողովրդական տոների արդի զարգացումների, և դրանց սովորութամշակութային նորահայտ դրսևորումների նկարագրության ամբողջացումը ժողովրդական հոգեբանության համատեքստում: Վերոնշյալ խնդիրների իրականացման մեջ հատկապես կարևորվում է մարզի տարածքում նպատակային ազգագրական գիտար-

շավների նշանակությունը: 2019-ին նախատեսվում է այդպիսի 2 գիտարշավների կազմակերպումը, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 0.4 միլիոն ՀՀ դրամ:

2019-ին Կենտրոնում շարունակվելու և ավարտին է հասցվելու նաև «Շիրակի ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները» հետազոտական աշխատանքը: Շարունակելու է ժողովրդական երաժշտության /երգ, նվագ, պար/ համընդգրկուն նյութեր ձեռք բերելու աշխատանքը մարզի Արթիկի շրջանի գյուղերում նախատեսված բանահավաքչական, երաժշտաազգագրական բնույթի գիտարշավներով, որոնց համար կպահանջվի մինչև 0,5 միլիոն ՀՀ դրամ: Կոմիտասի ծննդյան 150-ամյակի առնչությամբ ավարտին է հասցվելու «Կոմիտասը եւ Շիրակի ավանդական երաժշտությունը» պատմաերաժշտագիտական աշխատությունը, որի առաջին բաժինը նվիրվելու է Կոմիտասի կողմից շիրակյան ժողովրդական երգերի գրառումներին, իսկ երկրորդ բաժինը նվիրվելու է Ալեքսանդրապոլի աշուղական համքարության գործունեության մեջ կոմիտասյան սկզբունքների ինքնօրինակ դրսևորումների արժևորմանը:

2019-ին կսկսվի բանագիտական բնույթի նոր ուսումնասիրություն՝ «Բանահյուսական օրորոցային տեքստերի զարգացման դրսևորումները գրական միջավայրում», որտեղ քննության կառնվեն բանահյուսական և հեղինակային օրորոցայինների տեքստերի տարորոշման հարցերը: Աշխատանքի առաջին փուլը բանահավաքչական է, այնուհանդերձ փաստական նյութերի հիման վրա ներկայացվելու են ժանրային տարբերակման չափանիշները:

2019-ին կամփոփվի նաև Կենտրոնում իրականացվող «Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը XXդ. վերջին XXIդ. սկզբին» սոցիոլոգիական հետազոտությունը: Ուշադրության կենտրոնում կլինեն մարզի բնակչության զբաղվածության արդիական խնդիրները, մասնավորապես գործազրկության և արտագաղթի վրա մարզի արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման թողած ազդեցության հարցերը, բնակչության էթժողովրդագրական և սոցիալ-տնտեսական արդի վիճակի առանձնահատկությունները, մարդկային ռեսուրսների ներուժի գնահատումը և այլն:

2019թ-ին Կենտրոնում իրականացվող ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ կպատրաստվեն շուրջ 40 գիտական հոդված, գիտաժողովների 20 զեկուցում, 3 մենագրություն, արխիվային նյութերի ու վավերագրերի 1 ժողովածու: Լույս կտեսնի Կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականի 22-րդ հատորը: Կգումարվի «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» միջազգային տասներորդ գիտաժողովը, մարզի տարածքում կիրականացվեն 3 հնավայրերի պեղումներ, 6 ազգագրական գիտարշավներ, Գյումրիում՝ «Հացի տոն» և «Ազգային խոհանոց» փառատոներ: Համացանցում կգործեն երկլեզվյա կայքէջը /www.shirakcenter.sci.am/ և ֆեյսբուկյան էջը՝ կենտրոնի գիտական, գիտակազմակերպչական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ:

Կազմակերպության
տնօրենի ԺՊ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 3
«30» 01 20.18թ.
N 16-22 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«ՇԻՐԱԿԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ-2» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Գիտական սեմինարներ	Պարբերաբար կլսվեն հաղորդումներ Ծրագրով նախատեսված ուղղություններով իրականացվող աշխատանքների ընթացքի մասին		կատարման ընթացքի գնահատում	Յուրաքանչյուր ամսվա ավարտին	
2	Դաշտային աշխատանքներ	ա/բանահավաքչական գիտարշավներ բ/գիտական գործուղումների կազմակերպում գ/ հնագիտական աշխատանք	Ժող. բանահյուսության, երգարվեստի նոր նմուշների գրառումներ, սոցիոհարցումների, ֆոկուս-խմբերի կազմակերպում, հնագիտական հետախուզություն, պեղումներ ,չափագրումներ	Գիտական արժեք ներկայացնող նյութերի համակարգում և տվյալների օգտագործում	Երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներ Տարվա ընթացքում Երրորդ և չորրորդ եռամսյակներ	
3	Աշխատանք սկզբնաղբյուրների հետ	Արխիվային նյութերի և փաստաթղթերի ձեռքբերում տարբեր արխիվներում և ֆոնդերում, աշխատանք գրադարաններում		-- // --	Տարվա ընթացքում	
4	Նյութերի կամերալ մշակում	Հավաքված նյութերի քարտագրում, անձնագրավորում, վերականգնում, կատալոգների կազմում, երաժշտական նյութերի նոտագրում		-- // --	Առաջին և երկրորդ եռամսյակներ	
5	Նյութերի վերլուծում և շարադրանք	Գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, մասնակցություն գիտաժողովների, սեմինարների		Պատրաստի աշխատանքների տպագրում	Տարվա ընթացքում	

6	Գիտահիրատարակչական աշխատանք	ա/ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 22-րդ հատոր բ/ «Շիրակի հնագիտական և պատմագգագրական ուսումնասիրություններ» մատենաշարի 3-րդ պրակ գ/ մենագրություններ և ժողովածուներ		հատորի հրատարակում, 3-րդ պրակի տպագրում Հրատարակում, նախապատրաստում տպագրության	սեպտեմբեր չորրորդ եռամսյակ. դեկտեմբեր տարվա ընթացքում	
7	Գիտակազմակերպչական աշխատանք	ա/ երիտասարդ գիտնականի մարզային ամառային դպրոցի կազմակերպում բ/ հայրենագիտական զրույցներ կրթօջախներում և զինմասերում գ/ Տյառնընդառաջի և Սբ.Զատիկի քաղաքային տոնակատարությունների կազմակերպում, դ/ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» միջազգային տասներորդ գիտաժողով ե/ «Հացի տոն» 6-րդ մարզային փառատոնի կազմակերպում		Հայագիտական ուսումնասիրությունների արդյունքների քննարկում	Երկրորդ եռամսյակ /հուլիս/ Առաջին և երրորդ եռամսյակներում Առաջին և երկրորդ եռամսյակներ /փետրվար, ապրիլ/ Երրորդ եռամսյակ /սեպտեմբեր/ Չորրորդ եռամսյակ /հոկտեմբեր/	
Ընդամենը						30.980.500

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 4
«30» 01 2018թ.
N 15-22 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՇԻՐԱԿԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ-2» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	21420.0	*4284.0*	*9639.0*	*14994.0*	*21420.0*
2	տնտեսական և այլ ծախսեր	4397.1	*879.4*	*1978.7*	*3078.0*	*4397.1*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		*25817.1*	*5163.4*	*11617.7*	*18072.0*	*25817.1*
ԱԱՀ		*5163.4*	*1032.7*	*2323.6*	*3614.3*	*5163.4*
ԸՆԴԱՄԵՆԸ		**30980.5**	**6196.1**	**13941.3**	**21686.3**	**30980.5**

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ԼԻԱՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված 4.1
«30» 01 2018թ.
N 15-22 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1.380.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*460.0*
	գազի ծառայություն	*680.0*
	ջրամատակարարման ծառայություն	
	կապի ծառայություն	*240.0*
	աղբահանություն	
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	148.1
5	Գործուղումներ	336.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	2400.0
8	Հրատարակման ծախսեր	133.0
	.....	
Ընդամենը		4.397.1

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (ԼԻԱՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված 5
«30» 01 20.19 թ.
N 15-22 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՇԻՐԱԿԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ-2» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Հայրապետյան Սերգո Արտուշի	տնօրեն	բ.գ.դ.	195.000
2	Ակոպով Արկադի Արտյոմի	գիտ.քարտուղար	պ.գ.թ.	150.000
3	Կոստանյան Լիանա Համբարձումի	գլխ. հաշվապահ		160.000
4	Պետրոսյան Սարգիս Գարեգինի	առաջատար գիտ	պ.գ.դ.	100000
5	Եգանյան Լարիսա Գրիշայի	առաջատար գիտ	պ.գ.դ.	51000
6	Սահակյան Կարինե Արամի	ավ. գիտաշխատող	պ.գ.թ.	90000
7	Բազեյան Կարինե Ռազմիկի	ավ. գիտաշխատող	պ.գ.թ.	90000
8	Հայրապետյան Արմեն Սերգոյի	ավ. գիտաշխատող	պ.գ.թ.	90000
9	Բայաջյան Արտաշես Գեւորգի	ավ. գիտաշխատող	պ.գ.թ.	50000
10	Հարությունյան Հասմիկ Հայկի	ավ. գիտաշխատող	արվ.գ.թ	50000
11	Խաչատրյան Համազասպ Հակոբի	ավ. գիտաշխատող		50000
12	Ալեքսանյան Կարինե Վանիչկայի	գիտաշխատող	պ.գ.թ.	50000
13	Այվազյան Գեւորգ Սամվելի	գիտաշխատող	պ.գ.թ.	83000
14	Ավագյան Ինգա Էդուարդի	գիտաշխատող	պ.գ.թ.	42000
15	Հովհաննիսյան Ռոզա Պողոսի	գիտաշխատող		80000
16	Պետրոսյան Լուսինե Սարգիսի	գիտաշխնտող	պ.գ.թ.	83000
17	Մատիկյան Հասմիկ Համլետի	կրտսեր գիտաշխ		80000
19	Վարոսյան Երվանդ Ռազմիկի	լաբորանտ		78000
20	Սառաջյան Անի Բորիսի	գործավար, օպերատոր		133000
21	Գինոսյան Նեկտար Մկրտչի	մաքրող		80000
Ընդամենը				**1785000**

Կազմակերպության տնօրենի ԺՊ՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.